

## ԱՆՏՐԱՃԵՑՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՄ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՐԱՅԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Ժամանակակից սոցիալարժեքային կողմնորոշումների վրա հիմնվող քրեական իրավունքի որակապես նոր ինստիտուտների թվին մեր պատկերացմամբ պատկանում են «Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները»:

Միանգամից նշենք, որ խոսքը քրեական պատասխանատվությունից ազատելու մասին չէ:

Հակաիրավականությունը, հանրորեն վտանգավորությունը և, վերջին հաշվով, քրեական պատասխանատվությունն ու պատժելիությունը բացառող հիմքերի սոցիալիրավական հիմնավորման առաջարկվող հայեցակարգը դիտարկվում է իբրև քրեաիրավական կարգավորման ժամանակակից հիմնարար հիմնախնդիր, ընդ որում՝ ուշադրության կենտրոնում է գտնվում քրեաիրավական միջոցներով անձի անվտանգության ապահովումը:

Մարդն ազատ է իր վարքագծի ընտրության մեջ, կարող է գործի իմացությամբ ընդունել որոշումներ և կանխատեսել իր գործողությունների սոցիալական հետևանքները: Քրեական օրենքը սահմանում է, վտանգավոր արարքներից որոնք են հանցավոր: Դրա հետ մեկտեղ օբյեկտիվ պահանջ է առաջանում առանձնացնել այն պայմանները, որոնց ժամանակ դրանց հանցավորությունը բացառվում է:

Այդ պայմանների (հիմքերի, հանգամանքների)՝ իբրև սոցիալիրավական ինստիտուտի դիտարկումը թույլ է տալիս երաշխավորելու անձի անվտանգությու-

նը, գնահատելու ու տարբերելու թույլատրված վարքագիծը՝ անթույլատրելի (հանցավոր) վարքագծից:

Ոչ միայն քրեաիրավական արգելքների, այլև՝ քրեական պատասխանատվությունը բացառող հիմքերի սահմանումը պետք է լինի օրենսդրական իրավունքի առավելությունը, ժամանակակից քրեական իրավունքի զարգացման կարևոր ուղղությունը:

Քրեական հակաիրավության հետ մեկտեղ հարկավոր է ուշադրություն դարձնել «քրեական թույլատրելիության» (արարքի իրավաչափ լինելու) վրա: Վերջիններիս շարքում դասվում են «անհրաժեշտ պաշտպանության» և «ծայրահեղ անհրաժեշտության» ինստիտուտները, որոնք անձի անվտանգության ապահովման ինքնապաշտպանության հիմնական միջոցներն են:

ՀՀ 1961 թ. քրեական օրենսգիրքը արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների վերաբերյալ առանձին գլուխ չէր նախատեսում, այլ բովանդակում էր ընդամենը երկու հոդվածներ, որոնք նվիրված էին անհրաժեշտ պաշտպանությանը և ծայրահեղ անհրաժեշտությանը: Եվ դա այն դեպքում, երբ քրեական իրավունքի տեսությունն առանձնացնում է արարքի հանցավորությունը բացառող այնպիսի հանգամանքների մի ամբողջ համակարգ, որոնց նշանակությունը ճանաչվում է նաև դատական պրակտիկայի կողմից:

ՀՀ քրեական օրենսգիրքը<sup>1</sup> քննարկվող հանգամանքներին նվիրել է Ընդհանուր մասի 8-րդ գլուխը (Արարքի հանցավորու-

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



թյունը բացառող հանգամանքները):

Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ ասելով՝ ընդունված է հասկանալ այն առանձնահատուկ հանգամանքները (պայմանները), որոնց առկայության դեպքում անձի կողմից վնաս պատճառելը չի դիտվում իբրև քրեական պատասխանատվության հանգեցնող հանրորեն վտանգավոր արարք (հանցագործություն): Այլ կերպ՝ արարքի հանցավորությունը (հասարակական վտանգավորությունը և հակաօրինականությունը) բացառող հանգամանքների հիմնական չափանիշն այն է, որ դրանց առկայության պայմաններում սուբյեկտի կատարած գործողությունները թեև ձևականորեն, արտաքինապես համընկնում են այս կամ այն հանցագործության իրավաբանական հատկանիշներին, սակայն հանրորեն վտանգավոր ու հակաօրինական չեն համարվում, այլ ընդհակառակը, դրանք իրավաչափ ու անհրաժեշտ են, իսկ մեծ մասամբ՝ նաև միանգամայն արդարացի և օգտակար:

ՀՀ քրեական օրենսգիրքը, բացի անհրաժեշտ պաշտպանության<sup>2</sup> և ծայրահեղ անհրաժեշտության ավանդական ինստիտուտներից, մեր օրենսդրական պրակտիկայում առաջին անգամ նախատեսել է նաև արարքի հանցավորությունը բացառող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը, հիմնավորված ռիսկը, հրաման կամ կարգադրություն կատարելը:

Այս կատեգորիայի որոշ հանգամանքների (մասնագիտական պարտականությունների իրականացում, վնաս պատճառելու վերաբերյալ տուժողի համաձայնություն) նշանակությունն էլ ճանաչվում է քրեական իրավունքի գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում:

Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ տևական բանավեճ է եղել քննարկվող հանգամանքների հենց անվանման վերաբերյալ: Ունանց կողմից

առաջարկվել է դրանք կոչել արարքի հասարակական վտանգավորությունը բացառող հանգամանքներ. երկրորդ խումբ հեղինակները՝ արարքի պատիժը բացառող, և, վերջապես, երրորդ խումբ մասնագետները՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ<sup>3</sup>:

Լուծումների այսպիսի բազմազանությունը, ըստ երևույթին, բացատրվում է նրանով, որ հեղինակները ելնում են տարբեր դրույթներից, չեն պահպանում միասնական տերմինաբանություն, երբեմն շփոթում են զանազան հարցեր: Ուստի, ամենից առաջ, պետք է որոշել, թե ինչպիսի պահանջների պետք է համապատասխանի հանգամանքների տվյալ խումբը, որպեսզի դրան տրվի առավել ճշգրիտ անվանում, հավաստվեն այդ խմբի մեջ մտնող հանգամանքների տեսակները, ինչպես նաև որոշվի մյուս հանգամանքների նշանակությունը: Այնուհաստի, որ բոլոր դեպքերում նկատի է առնվում քրեական օրենքով նախատեսված հետևանքներ առաջացնելը, որի արդյունքում էլ կարող է ծագել անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Իսկ եթե վնաս պատճառելու փաստը բացակայում է, ապա պատասխանատվությունը բացառող հանգամանքների հարցը դառնում է անառարկայական: Երկրորդ՝ նկատի է առնվում հատկապես քրեական պատասխանատվության, այլ ոչ թե պատժելիության բացառումը: Պատժից ազատելուն հանգեցնող կամ այն բացառող պայմանների ու հանգամանքների վերլուծությունը տրվում է պատժի մասին ուսմունքի մեջ: Երրորդ՝ քրեական պատասխանատվության բացառումը տվյալ դեպքում տեղի է ունենում ոչ սուբյեկտիվ կողմի բացակայության պատճառով: Հաշվի առնելով այս նկատառումները, կարելի է ընդունել, որ քննարկվող հանգամանքները կարող են բացառել կամ արարքի հասարակական վտանգավորությունը կամ դրա հակաօրինականությունը, կամ երկուսը միաժամանակ<sup>4</sup>:

Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության մասին կարելի է խոսել որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների, բանգի այդ իրավիճակներից որևէ մեկում կատարված արարքն իր նպատակներով և արդյունքով հանրորեն օգտակար է: Ուստի այդ հանգամանքները դասվում են արարքի հասարակական վտանգավորությունը բացառող հանգամանքների շարքին:

Անհրաժեշտ պաշտպանության հասկացության պարզաբանումը դժվարանում է այնքանով, որ այս ուղղությամբ հրապարակի վրա առկա բազմաթիվ աշխատություններով ու հոդվածներով հանդերձ մի շարք կարևոր հարցերի շուրջ իրավաբանական գրականության մեջ միասնական տեսակետների բացակայություն է նկատվում: Այս առումով որոշակի պարզություն է մտցրել ՀՀ Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումներով և նախադեպային որոշումներով:

Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արդյուն Նորայրի Հակոբյանի* գործով 2010 թ. օգոստոսի 27-ին կայացված թիվ ԵԿԴ/Օ149/01/09 որոշմամբ (այսուհետ՝ *Ա. Հակոբյանի* գործով որոշում):

Անհրաժեշտ պաշտպանությանն առնչվող հիմնախնդրի էությունը հանգում է հետևյալին.

«(...) Ա. Հակոբյանը՝ որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 34- 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

(...) Վերաքննիչ դատարանը, քննելով Ա. Հակոբյանին առաջադրված մեղադրանքը, հաստատված է համարել այն, որ վերջինս զենքի գործադրմամբ խուլիգանական արարքները կանխելու նպատակով կիրառել է որսորդական ողորկափող հրացան, մասնավորապես (...) տեսնելով, որ Վ. Պետրոսյանն արդեն դադարեցրել է հարձակումը և հեռանում է համալիրի տարածքից, մարմնա-

կան վնասվածք ստանալուց շուրջ հինգ րոպե անց, սպանելու դիտավորությամբ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով մեկ անգամ կրակել է հյուրանոցային համալիրի ելքի մոտ գտնվող Վ. Պետրոսյանի գլխին, որի արդյունքում վերջինս ստացել է կյանքին վտանգ սպառնացող մարմնական ծանր վնասվածքներ: (...) Ա. Հակոբյանի կողմից կատարված նույն կրակոցի արդյունքում ձախ բազկի դրսային մակերեսի շրջանում հրազենային կոտորակային վնասվածք է ստացել նաև Վ. Պետրոսյանից քիչ հեռու կանգնած Գեղամ Աղաջանյանը, որի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս:

(...) Վերաքննիչ դատարանի դատավճիռը բողոքարկվել է: Բողոք բերած անձը պնդում է, որ Ա. Հակոբյանի արարքը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: (...) Բողոքի հեղինակը չի մնավորված է համարել Ա. Հակոբյանին առաջադրված մեղադրանքի մեջ առկա այն հետևությունը, թե վերջինս գիտակցել է, որ Վ. Պետրոսյանը դադարեցրել էր հարձակումը և համալիրի տարածքից հեռանալու մտադրություն ուներ: (...) Բողոքաբերը փաստարկել է նաև, որ անհրաժեշտ պաշտպանության ժամանակ կարող է պատճառվել ցանկացած վնաս (...)»:

Փաստորեն, ՀՀ Վճռաբեկ դատարանի առջև դրվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում անձի առողջությանը պատճառված իրավաչափ վնասը հանցավոր արարքներից սահմանազատելու չափանիշների պարզաբանման հարցը: Առաջադրված հարցի պարզաբանման նպատակով ՀՀ Վճռաբեկ դատարանն առաջին հերթին անդրադարձել է անհրաժեշտ պաշտպանության հարցերը կանոնակարգող ՀՀ օրենսդրության վերլուծությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատար-



վել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

2. Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ:

3. Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից ու պաշտոնական դիրքից:

4. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք պաշտպանվողի համար ակնհայտ չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև սպորիմաքար և բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառված վնասի ծանրությունից»:

Վերլուծության ենթարկելով ներկա-

յացված դրույթները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը *Ա. Հակոբջյանի* գործով որոշման մեջ արձանագրում է, որ՝

«(...) անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, կարող է դրսևորվել այն իրավիճակում, երբ հանրորեն վտանգավոր ոտնձգությունից՝ ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվում են անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը: Իսկ սեփական կյանքը, առողջությունը և իրավունքները պաշտպանելիս անհրաժեշտ պաշտպանությունը դրսևորվում է որպես մարդու հիմնարար իրավունք (...):»

*Ա. Հակոբջյանի* գործով որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը անմիջականորեն բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներից: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը կյանքի իրավունքը սահմանելիս ուղղակիորեն ամրագրում է, որ «(...) Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է (...): Նշված դրույթն իր անմիջական արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում: Մըքքանը և այլը՝ ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով՝ սահմանելով անհրաժեշտ պաշտպանության դեպքում «բացարձակ անհրաժեշտության» բովանդակությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրում է, որ ««բացարձակ անհրաժեշտության» եզրույթի բովանդակությունից պետք է եզրահանգել, որ արարքը զնահատելիս անհրաժեշտ է դեկավարվել ավելի խիստ չափանիշներով, քան նրանք, որոնք արտացոլվում են «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ վարքագիծ» արտահայտության ներքո (...): Մասնավոր-

րապես՝ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կիրառվող ուժը պետք է խստորեն համաչափ լինի 2-րդ հոդվածում արտացոլված նպատակներն ապահովելու համար (...)»<sup>5</sup>:

Անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, նախատեսված է նաև մի շարք երկրների քրեական օրենսգրքերում: Գերմանիայի քրեական օրենսգրքի 32-րդ պարագրաֆում անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը բնորոշվում է որպես սեփական կամ այլ անձի հանդեպ առկա հակաիրավական ոտնձգությանը արձագանքելու, դրանից պաշտպանվելու միջոց, և նման վարքագիծը հակաիրավական չի համարվում: Նույն օրենսգրքի 33-րդ պարագրաֆում նաև նշվում է, որ եթե անձն անհրաժեշտ պաշտպանության թույլատրելի սահմաններն անցնում է իրեն կորցնելու կամ վախի ազդեցությամբ, ապա նա քրեական պատասխանատվության ենթակա չէ<sup>6</sup>: Համանման դրույթներ են առկա նաև Եվեյցարիայի քրեական օրենսգրքում<sup>7</sup>: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-5-122-7-րդ հոդվածները ևս կանոնակարգում են անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին վերաբերող հարցերը, մասնավորապես նշվում է, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով իր կամ այլ անձի հանդեպ անհիմն հարձակման ժամանակ կատարում է արարք՝ պայմանավորված իրեն կամ այլ անձանց օրինական պաշտպանելու անհրաժեշտությամբ, բացառությամբ, երբ թույլ է տրվում անհամապատասխանություն ընտրված միջոցների և ոտնձգության աստիճանի հարաբերակցության առումով<sup>8</sup>:

Ներկայացնելով ՀՀ քրեական օրենսդրության մեջ արտացոլված՝ անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները՝ Ա. Հակոբյանի գործով որոշման 27-րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանը նաև փաստում է, որ՝

«(...) Անհրաժեշտ պաշտպանության

իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդունում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունն իրավաչափ և, հետևաբար, արարքի հանցավորությունը բացառող: Այսպես՝ անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

- ա) ոտնձգության հանրային վտանգավորությունը,
- բ) ոտնձգության առկայությունը,
- գ) ոտնձգության իրական լինելը,
- դ) վտանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին,
- ե) վնաս հասցնելը միայն ոտնձգողին,
- զ) պաշտպանության համարժեքությունը ոտնձգությանը:

Առաջին պայմանից հետևում է, որ ոտնձգությունն օժտված է հանրային վտանգավորությամբ, եթե այն անձի, հասարակության, պետության շահերին կարող է էական վնաս հասցնել:

Երկրորդ պայմանի համաձայն՝ ոտնձգությունը համարվում է առկա, երբ այն արդեն սկսվել է, ընթացքի մեջ է և չի ավարտվել, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է ոտնձգությունը սկսելու իրական, անմիջական սպառնալիք:

Ոտնձգության առկայության պայմանը ենթադրում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն անթույլատրելի է արդեն ավարտված ոտնձգության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վնաս պատճառողը չի գիտակցել ոտնձգության ավարտման փաստը: Վերջինիս դեպքում ոտնձգությունից առաջացած հուզմունքի պատճառով պաշտպանվողին կարող է թվալ, թե ոտնձգությունը դեռևս չի ավարտվել և անհրաժեշտ է պաշտպանվել: Նման դեպքերում թեև պաշտպանությունն անժամանակ է (ուշացած է), այն, այնուամենայնիվ, իրավաչափ է:

Երրորդ պայմանի իմաստով ոտնձգությունն իրական է, եթե այն իրոք կատար-



վում է և ոչ թե պաշտպանվողի երևակայության արդյունք է:

Չորրորդ պայմանի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանությունը ներառում է ոչ միայն սեփական, այլև ուրիշ անձանց իրավունքների, ինչպես նաև հասարակության և պետության շահերի պաշտպանության դեպքերը: Ընդ որում՝ այլ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրականացնող անձը կարող է պաշտպանությունն իրականացնել սեփական նախաձեռնությամբ՝ առանց սպասելու, որ իրենից օգնություն խնդրեն:

Ըստ հինգերորդ պայմանի՝ անհրաժեշտ պաշտպանությունն իրականացվում է միայն ոտնձգողին վնաս հասցնելու միջոցով:

Ընդ որում՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց, պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և ծառայողական դիրքից:

- 1 ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀՊՏ № 25 (260), 2.05.2003 թ.
- 2 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս. Մ. Վ. Գրիգորյան, Անհրաժեշտ պաշտպանությունը քրեական իրավունքում, Երևան, 1997, էջ 5-18: Мацокина Г.Н., Уголовно-правовая характеристика института необходимой обороны: дисс...канд. юрид. наук. Ставрополь, 2002, էջ 181-182; Атабаева Т.Ш., Необходимая оборона: теория, законодательство, практика применения: дис... канд. юрид. наук. Томск, 2004, էջ 150-151:
- 3 Տե՛ս Բаранова Е.А., Необходимая оборона в Уголовном законодательстве России и ее отличие от смежных институтов: дис... канф. юрид. наук. Вологда, 2006, էջ 79-80:
- 4 Տե՛ս Горшенков Г.Г., Антикриминальная

- безопасность личности: дис... канд. юрид. наук. Ставрополь, 2009, էջ 257-258:
- 5 Տե՛ս McCAN AND OTHERS v. THE UNITED KINGDOM գործով 1995 թ. սեպտեմբերի 27-ի վճիռը, զանգառ քիվ 18984/91, կետ 149:
- 6 Տե՛ս «Уголовный кодекс ФРГ». Издательство «Зерцало», 2000:
- 7 Տե՛ս «Уголовный кодекс Швейцарии». Изд. «Юридический Центр Пресс», 2002:
- 8 Տե՛ս «Уголовный кодекс Франции». Юридический Центр Пресс, ЦПБ., 2002. Классен А.Н., Якуньков М.А., Зарубежное законодательство о необходимой обороне. Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Право, 2007, N4 (76), էջ 73-77:

## RESUME - РЕЗЮМЕ

### THE NECESSARY PROTECTION AS A JUSTIFIED AND LEGAL MEANS OF SELF-PROTECTION FOR PERSON'S SECURITY

Hayk Mkrtchyan

*PhD Student at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA*

The article thoroughly analyses one of the main institutes in criminal law - essence of the necessary protection for persons security. Social-legal approach which expresses in illegal actions, public danger, criminal responsibility and the basis of excluding penalty are observed as a modern regulating tools in criminal law. The article highlights the criminal-legal means, which provide persons security.

**Keywords:** *persons security, criminal- legal protection, criminal law, criminal responsibility, penalty, illegal.*

### НЕОБХОДИМАЯ ЗАЩИТА КАК СПРАВЕДЛИВОЕ И ЗАКОННОЕ СРЕДСТВО САМОЗАЩИТЫ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ

Айк Мкртчян

*Аспирант Института философии, социологии и права НАН РА*

В данной статье проводится подробный анализ одного из основных средств уголовно-правового обеспечения института необходимой защиты безопасности личности, его сущности и содержания. Предлагаемый в статье социально-правовой подход обоснования противозаконности, общественной опасности, уголовной ответственности и основы исключения наказания представлен как современный институт, в центре внимания которого находятся уголовно-правовые средства, обеспечивающие безопасность личности.

**Ключевые слова:** *безопасность личности, уголовно-правовая защита, уголовное право, уголовная ответственность, наказание, противозаконность.*

**Բանալի բառեր** - *անձի անվտանգություն, քրեաիրավական պաշտպանություն, քրեական իրավունք, քրեական պարտավորություններ, պարիժ, հակաիրավականություն:*

**Հ. Մկրտչյան** - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, էլ. փոստ՝ haykamkrtchyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 14.06.2019, տրվել է գրախոսության՝ 14.06.2019, երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 17.07.2019